Հուսիկ Արա

Սի՛րտ լինի

Տաք էր այն ժամանակը, երբ սիրում էի քեզ,
ամեն վայրկյանն էր թանկ և նման էր հրաշքի,
երկինքը այնքան մոտ էր երկրին,
որ աստղերը կաթում էին ուղիղ մեր հոգու մեջ՝
խոստովանություն,
թե առաջինը հնչել է՝ սի՛րտ լինի.
լույսը հետո էր՝ որպես ստվերը սիրո:

Քո ձեռքերը շարունակությունն էին իմ թևերի,
քո աչքերը ընթացք էին իմ հայացքին,
քո կյանքը երաշխիքն էր իմ ապրելու,
բոլոր միֆերն իրական էին,
և անմահ էի ես ինչպես աստվածները Հին Հռոմում:
Մի եղանակ էր երկրի վրա՝ գարուն ու միշտ լուսաբաց,
նշենին ծաղկում էր այգում տարին տասներկու ամիս,
չարը բարի էր, և հարկ չկար դրախտ երազել:

Քեզնից հետո նույնն է,
ինչպես քեզնից առաջն էր,
կրկնվող ու անփոփոխ.
էլի սպասում ենք, որ լույս լինի,
նորից միֆ է սերը,
և այլևս աստվածներ չկան Հին Հռոմում: